



ԲԱՆԱԽՈՍ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, 1998 թվ.

ԹԻՎ 20

Տնտեսական զարգացումը Արևելյան Գերմանիայում

ԿԱՐՈԼԱ ՄՅՈՒԼԼԵՐ ԶՈԼՏՔԵՄՓԵՐ

Գերմանիայի դաշնային հանրապետության ղեկավար

1990 թվականի հոկտեմբերի երեքին իրականացավ Արևելյան եւ Արեւմտյան Գերմանիաների իրավական եւ քաղաքական միավորումը: Արևելյան Գերմանիայի հինգ նոր դաշնային հողեր միացան Արեւմտյան Գերմանիային, եւ այդպիսով կազմավորվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը:

Կանդիդատնամ գլխավորապես տնտեսական զարգացման հարցերին, քանի որ արեւելյան մասի փոխակերպումը մեծ մասամբ պայմանավորվում է այդ խնդիրներով: Կենտրոնացված, պլանային տնտեսությունից շուկայականին անցումը մի գործընթաց է, որն իր մեջ ներառում է խորը կառուցվածքային փոփոխություն, իր հետ բերում բազմաթիվ փոփոխություններ թե քաղաքական, թե իրավական, թե սոցիալական ու հոգեբանական ասպարեզներում:

Այդ բոլոր խրթին, թնջուկային գործընթացների ստվար ծավալը կիրառվեց Արևելյան Գերմանիայում, որով հետեւ այնտեղ անմիջապես ներդրվեց քաղաքական-իրավական նոր հասարակարգ: Չնայած նոր կառույցների, նոր իրավական դաշտի, օրենքի իշխանության հաստատման, մամուլի ազատության հարցերը, Գերմանիայի համար արդեն լուծված պրոբլեմներ էին, քանի որ արեւելյան մասը պարզապես միացավ ավելի մեծ արեւմտյան մասին, այսուհանդերձ, դրանց հաստատման գործում որոշ դժվարություններ եղան: Ի դեպ, 1989թ. մարդահամարի տվյալներով այն ժամանակվա ԳԴՀ-ի բնակչությունը 16 միլիոն էր, իսկ Դաշնային Հանրապետությունը նախքան վերամիավորումը ուներ 60 միլիոն բնակչություն:



Շատ դրական նախապայման էր այն, որ այդ ժամանակ՝ 1989-90թթ., Արեւմտյան Գերմանիան անցնում էր տնտեսական վերընթացի եւ բյուջեի համախմբման փուլով: Այն ժամանակ հարկային բեռը անգամ նվազել էր: Մենք դա հիշում ենք որոշակի կարոտախտով, որովհետեւ դրանից հետո պետական ծախսերի եւ ներդրումների մեծ մասի ֆինանսավորումը ընկնում է քաղաքացիների վրա՝ ավելացնելով հարկային բեռը:

«Միավորման գործընթացն, անշուշտ, մի մարտահրավեր էր բոլորիս համար:»

Առայժմ քաղաքական զարգացման տեսանկյունից գերմանական տնտեսության միավորումը տեղի ունեցավ քաղաքական եւ իրավական վերամիավորումից մի քանի ամիս առաջ: Այն, ինչ մենք կոչում ենք տնտեսական, սոցիալական եւ դրամական միություն, տեղի ունեցավ 1990թ. հուլիսի մեկին: Այդ ժամանակ դա անհրաժեշտ էր, որովհետեւ մեզ մոտ միգրացիոն խոշոր հոսքեր էին դիտվում: Այս պարագայում, չնայած դրամական միությունը, որը ավելի ուշ կազմավորվեց, իր հետ բերում էր որոշակի լուրջ կառուցվածքային խնդիրներ, այսուհանդերձ, այն քաղաքական անհրաժեշտություն էր: Կարելի էր կանխատեսել, որ վերամիավորման քաղաքական որո-

շունը տնտեսության կացությունը կբարդացներ, եւ տնտեսության տեսանկյունից այն անգամ սխալ քայլ կարելի էր համարել: Այնուհանդերձ, մենք այդ քայլին միտունմավոր կերպով գնացինք, որովհետեւ ցանկանում էինք հավասարեցնել կենսամակարդակը:

Այսօրվա տեսանկյունից, երբ փորձում ենք գնահատել Արեւելյան Գերմանիայում այն ժամանակ առկա տնտեսական դժվարությունները, արձանագրում ենք, որ մեր բոլոր լավագույն ջանքերով հանդերձ, թերագնահատեցինք այն կառուցվածքային պրոբլեմները, որ գոյություն ունեին: Մենք դիտարկում էինք հետեւյալ պատկերը. 70-ականների վերջից ի վեր Դեմոկրատական Հանրապետությունը ունեցավ որոշակի վերելք: Նրանց մոտ ներմուծվող հումքի գները աճեցին, ինչի հետեւանքով նվազեցին ներմուծումների ծավալները: Դրանք սկսեցին փոխարինվել տեղական հումքերով: Մասնավորապես, էներգետիկայի բնագավառում ներկրվող վառելիքը գնալով էլ ավելի թանկացավ, եւ հույսը դնելով ածուխի վրա խոշոր ներդրումներ արվեցին ածուխից էլեկտրականություն ստանալու գործում: Այսօրվա մեր վերլուծություններով, ամենալուրջ սխալն այն էր, որ սահմանափակ ռեսուրսների պայմաններում ներդրումները զգալիորեն կրճատվեցին՝ հիմնականում ուղղվելով երկու տնտեսական դաշտերի՝ ներմուծվող էներգակիրների փոխարինմանը եւ միկրոէլեկտրոնիկայի ասպարեզին: Մյուս բնագավառներում բառացիորեն ոչ մի ներդրում չէր կատարվում: Նրանք պնդում էին, որ միջոցների մեծ մասը գնում էր աշխատավարձերի ծածկմանը:

Երբ ԳԳՀ-ն դադարեց որպես պետություն գոյություն ունենալուց, ինչն ուղեկցվեց Բեռլինի պատի քանդմամբ եւ միգրացիոն խոշոր գործընթացներով, ներդրումների պակասի բերումով արեւելյան հատվածում արդյունաբերական սարքավորումների միջին տարիքը կազմում էր տասնութ տարի, այն դեպքում, երբ արեւմտյան մասում այդ ցուցանիշը չորս տարի էր: Վերամիավորման պահին ԳԳՀ-ի արդյունաբերական սարքավորումների 21% քսան տարուց ավելի հնություն ուներ, մինչդեռ ԳԳՀ-ում միայն 5% էր այդ տարիքին: Մինչեւ հինգ տարեկան սարքավորումները արեւելքում հասնում էին 27%, այն դեպքում, երբ արեւմտյան մասում որպես կանոն այդ ցուցանիշը

կազմում է անցվազն 40%:

Արտադրողականության մեջ առկա խզվածքը ուղեկցվում էր աշխատանքով ծածկման շատ բարձր ցուցանիշով: Աշխատուժ էր ներմուծվում անգամ Վիետնամից, Անգոլայից, Մոզամբիկից, այլ երկրներից: Այսօրվա մեր գնահատմամբ նման բարձր զբաղվածությունը պայմանավորված էր կազմակերպչական թերություններով, անարդյունավետ ծրագրավորմամբ:

1990թ. հուլիսի 1-ին, երբ իրականացվեց դրամական միությունը, այս բոլոր շեղումներն ու թերությունները ամմիջապես երեւարկվեցին: Դրանցից ոչ խուսափել էր հնարավոր, ոչ ժամանակ կար հարմարվելու: Դա նման էր շոկային թերապիայի, բայց ինչպես նշեցի, մենք անհրաժեշտ էինք գտնում հնարավորին չափով հասնել հավասարակշռության արեւելքի ու արեւմուտքի միջեւ՝ առաջիններին թույլ տալով զգալու ընդունված քաղաքական որոշման դրական անդրադարձները:

Նշված հարցերով զբաղվելու համար 1990թ. հունիսի վերջին ստեղծվեց մի գործակալություն, որի լիազորությունների մեջ էր մտնում արեւելյան հինգ նոր հողերի տնտեսության սեփականաշնորհումը, պետության գործարար ոլորտի ֆունկցիաների կրճատումը, վերակազմավորումը: Երբեմն նրանք գերակայությունը տալիս էին սեփականաշնորհման գործընթացի վերահսկմանը: Այն դեպքերում, երբ չէր գտնվում այս կամ այն ձեռնարկության առողջացման ծրագիր, դրանք լուծարվում էին: Ֆինանսների դաշնային նախարարությանը պատկանող այդ գործակալությանը 1990թ. հուլիսին փոխանցվեց 32000 ձեռնարկություն, որոնցից 7000-ը՝ արդյունաբերական:

Ինն ամիս անց՝ 1991-ի մարտի վերջին, գործակալությունն արդեն վաճառել էր 17000 ձեռնարկություն: Անշուշտ, այս բարձր ցուցանիշը ես պես չի արտացոլում ծառայած խնդրի բարդությունը: Սկզբում հնարավոր եղավ վաճառել միայն մանր եւ փոքր ձեռնարկությունները, որոնք հեշտորեն կլանվեցին: Այնուհետեւ սեփականաշնորհվեցին սպասարկման ծառայություններ իրականացնող կառույցները: Ներկա դրությամբ հիշյալ գործակալությունն այլեւս գոյություն չունի, ինչը նշանակում է, որ բոլոր 32000 ձեռնարկությունների հարցերն այս կամ այն կերպ լուծ-

«Ներդրումներին խոչընդոտում էին նաեւ իրավական խնդիրները:»



Կարոլա Մյուլլեր - Դոկտրենտները ծնվել է 1955թ. նոյեմբերի 28-ին, Բեդ Համբուրգում:

1974-80թթ. Ֆրանկֆուրտում (Գերմանա) եւ Փարիզում (Ֆրանսիա) ուսումնասիրել է դրամական եւ ֆինանսական քաղաքականություն ու բանկային գործ:

1980-81թթ. աշխատել է Սեխիկոյի բանկի համար, 1981-83թթ. վերակառուցման եւ զարգացման Գերմանական բանկում, 1983-85թթ. Թունիզիայի զարգացման բանկում՝ որպես խորհրդատու:

1985 թվականից սկսել է աշխատել Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունում: 1987-90թթ. նշանակում է ստացել Դորդանանում, իսկ 1992-96թթ.՝ Եգիպտոսում: Աշխատել է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության էկոնոմիկայի վարչության չորս տարբեր բաժիններում:

1996 թվականի հուլիսից տիկին Կարոլա Մյուլլեր- Դոկտրենտները Հայաստանում Գերմանիայի արտակարգ եւ լիազոր դեսպանն է:

վել են:

Անցման շրջանի ցնցումը, արելեյան մարկի փոխարինումը արելնտյանով արմատապես փոխեցին, նոր որակ տվեցին շուկայական հարաբերությունների զարգացմանը: Տնտեսա-սոցիալական միության առաջին ամսում արելեյի համախառն ներքին արտադրանքը իջավ իր նախկին ցուցանիշի 60% մակարդակին, իսկ 1991թ. ընթացքում ընկավ մինչև 30%:

Միավորման գործընթացն, անշուշտ, մի մարտահրավեր էր բոլորիս համար: Ընթացքում մենք անմիջապես փորձեցինք վերանայել նաև այն խնդիրները, որոնք վերաբերում էին կապիտալ ներդրումներին եւնարդկային պաշարներին: Նախնական փուլում օպտիմալ տարբերակն այն էր առաջարկվում, որ հինգ տարում այս հարցերը կարելի է լուծել: Փորձը ցույց տվեց, սակայն, որ շատ ավելի ժամանակ պահնեցվեց: Հենց սկզբում տնտեսական վերլուծություններն ու հաշվարկները ցույց էին տալիս, որ եթե կապիտալ ներդրումները ավելանային տարեկան տաս տոկոսի չափով, ապա հարցերը լուծելու համար կպահանջվեր տասնհինգ տարի:

Խոշոր հիմնախնդիրներից էր աշխատանքի շուկան: Շուկայական տնտեսության ներդրումով երեւարկվեց թաքմված գործազրկությունը: Արդեն 1990թ. հաշվարկվել էր, որ անցման շրջանում կկորցվի շուրջ 2,8 միլիոն աշխատատեղ:

Լուրջ մոտեցում պահանջող խնդիրներից էր ներդրումներին խոչընդոտող պատճառների բացահայտումը: Նախնական շրջանում ներդրողները բավական դժկամությամբ էին իրենց միջոցները տեղափոխում արելնուտքից արելելը: Աստիճանաբար վիճակը սկսեց բարելավվել, եւ 1991-94թթ. ընթացքում ներդրումների աճի միջին տեմպը մոտ 8% էր: Սա, անկասկած, շոշափելի տեմպ է: Սակայն դրան հեշտ էր հասնել, քանի որ սկզբնական մակարդակը բավական ցածր էր: 1995թ. աճի տեմպը արդեն կազմեց 5,5%, իսկ ներկայումս 4% է:

Ծավալուն ներդրումներ արվեցին ենթակառուցվածքային բարեփոխումներում, հատկապես՝ փողոցների, երկաթուղիների, հեռահաղորդակցության ասպարեզներում: Արդեն 1992թ. դաշնային կառավարությունը նոր հողերում մեկ շնչի հաշվով երկու անգամ ավելի ծախս էր կատարում, քան հանրապետության արելնտյան մասում: Ենթակառուցվածքների խնդրով մենք դիմեցինք նշանակալի ձեռներեցներին, որոնց 28% կարծիքով տնտեսական ակտիվությունը սահմանափակվում է ենթակառուցվածքների թուլության հետեւանքով: 1995 թվականին այդ կարծիքին էր ձեռներեցների միայն 17%:

Ներդրումներին խոչընդոտում էին նաև իրավական խնդիրները: Արելելի կողմից փոխառնվել էր արելնուտքի իրավական համակարգը, սակայն, բարդություններ էին ծագում հատկապես այն սկզբունքի կիրառման ժամանակ, որով ցանկացած սեփականություն վերադարձվում էր իր օրինական տիրոջը: Վերամիավորման ժամանակ բազմաթիվ հողակտորներ, շինություններ դարձան միանգամից մի քանի տերերի հայցերի առարկա: Նրանցից յուրաքանչյուրը տարբեր

ժամանակ սեփականության իրավունք էր ունեցել այս կամ այն օբյեկտի նկատմամբ: Ասեմք, հայցվորների թվում հայտնվեցին եւ այն հրեաները, որոնք վաճառելով իրենց սեփականությունը մեկնել էին Գերմանիայից, եւ այն արելնտագերմանացիները, որոնք ժամանակին գնել էին դրանք: Սակայն, նշված երկու գործարքներն էլ օրինական տեսանկյունից չէին համապատասխանում այն չափանիշներին, որոնք մենք այժմ ենք կիրառում: Նման հարցերը պետք է լուծվեին օրենսդրական նոր ակտեր սահմանելով, որոնք նախապատվությունը տալիս էին ներդրողներին՝ պահպանելով սեփականությունը օրինական տիրոջը վերադարձնելու սկզբունքը: Եթե վերջինս ապահովել տեխնիկապես անհնար էր լինում (ասենք՝ հողակտորը օգտագործվել էր օդանավակայանի շինարարության ժամանակ), ապա նախկին սեփականատերը փոխհատուցում էր ստանում:

Ներդրումների խթանման միջոցներից մեկը մի շարք բանկերի լրացուցիչ ֆոնդերի տրամադրումն էր: Զարգացման ծրագրերի խրախուսման, ռիսկային գործունի չեզոքացման, ներդրումային այլ նախագծերի խթանման համար նախատեսվում էին հարկային առավելություններ եւ դոտացիաներ:

Այս ամենի միջոցով մենք հասանք նրան, որ արդեն 1993թ. մեկ շնչի հաշվով արելելում կատարված ներդրումները շուրջ 20% բարձր էին, քան արելնուտքում, իսկ 1994-96թթ. ընկած ժամանակաշրջանում այդ ցուցանիշը արդյունաբերության մեջ 40% էր բարձր: Ընդհանուր առմամբ, արելեյան հինգ հողերի ձեռնարկություններում կատարված ներդրումները կազմում են ավելի քան 500 միլիարդ գերմանական մարկ: (Այն ժամանակ մեկ դոլարը 1,7 գերմանական մարկ էր կազմում:) Բացի այդ, ներդրումներ արվեցին ենթակառուցվածքների, շինարարության մեջ: Եղան նաեւ դրամական փոխանցումներ, որոնք ներկա ընթացմամբ այնքան էլ արդյունավետ չէին, սակայն ուղղված էին սոցիալական վճարումներին: Ընդհանուր հաշվով, Արելեյան Գերմանիա մուտք գործեց ավելի քան մեկ տրիլիոն գերմանական մարկ:

Այսուհանդերձ, այն, ինչին մենք կարողացանք հասնել, ընդամենը սպառման մեջ գոյություն ունեցող խզվածքի նեղացումն էր, արելեյան մասում ժամանակակից ենթակառուցվածքի ստեղծումը, ինչպես նաև կենսամակարդակի շոշափելի բարձրացումը: Դեռեւս առկա է մեծ գործազրկություն, որը արելեյան հինգ հողերում 15-20% է: Սա մեծ մասամբ պայմանավորվում է դրամական միությունից բխած ցնցումով, որը նաև շոշափելիորեն ավելացրեց աշխատուժի գինը:

Տնտեսական վերամիավորումից անմիջապես հետո աշխատուժի բաղադրիչի ծախսը յուրաքանչյուր արտադրված միավորի համեմատ արելելում 26% ավելի բարձր է, քան արելնուտքում, չնայած այն ժամանակ արելելում աշխատավարձը մնում էր նախկին մակարդակի վրա: Հետագայում հաշվարկների միջոցով պարզեցինք, որ արտադրողականության խզվածքը արելեյան եւ արելնտյան տնտեսությունների միջև 17% էր: Սա թերագնահատվեց սկզբնական փուլում:

Տնտեսական վերամիավորումից անմիջապես հետո աշխատուժի բաղադրիչի ծախսը յուրաքանչյուր արտադրված միավորի համեմատ արելելում 26% ավելի բարձր է, քան արելնուտքում, չնայած այն ժամանակ արելելում աշխատավարձը մնում էր նախկին մակարդակի վրա: Հետագայում հաշվարկների միջոցով պարզեցինք, որ արտադրողականության խզվածքը արելեյան եւ արելնտյան տնտեսությունների միջև 17% էր: Սա թերագնահատվեց սկզբնական փուլում:

Տնտեսական վերամիավորումից անմիջապես հետո աշխատուժի բաղադրիչի ծախսը յուրաքանչյուր արտադրված միավորի համեմատ արելելում 26% ավելի բարձր է, քան արելնուտքում, չնայած այն ժամանակ արելելում աշխատավարձը մնում էր նախկին մակարդակի վրա: Հետագայում հաշվարկների միջոցով պարզեցինք, որ արտադրողականության խզվածքը արելեյան եւ արելնտյան տնտեսությունների միջև 17% էր: Սա թերագնահատվեց սկզբնական փուլում:

«Ընդհանուր հաշվով, Արելեյան Գերմանիա մուտք գործեց ավելի քան մեկ տրիլիոն գերմանական մարկ:»

լում: Չնայած բազմաթիվ հաստատություններ փորձեցին գնահատել Արեւելյան Գերմանիայի տնտեսական ներուժը, սակայն մենք ամբողջական տեղեկություններ չունեինք: Միայն անցման վերափոխումների ընթացքում աստիճանաբար հայտնաբերեցինք, թե որքան հին ու մաշված է այդ հատվածի հիմնական միջոցները: Առաջին երկու տարվա ընթացքում կապիտալի մեջ ունեցած զուտ կորուստը զգալի չափի հասավ: Հիմնական միջոցների այն մասը, որը պետք է դեն նետվեր ավելի մեծ ծավալ էր կազմում, քան ներդրումները: 1989-90թթ. մենք չափազանց թերագնահատեցինք այս գործոնը: Աստիճանաբար ի հայտ եկան բոլոր այն աղճատումները, որոնք հին համակարգի պայմաններում կարող էին օրը ցերեկով քողարկվել:

«Քանի դեռ ձեռնարկությունները բավականաչափ շահույթ չեն ապահովում ներդրողների համար, այդպիսի տնտեսությունը չի կարելի հաջող գործող համարել:»

Ի մի բերելով անցումային փոխակերպումների մեր փորձառությունը կարելի է ասել, որ Արեւելյան Գերմանիայի տնտեսությունը ինքնուրույն չէր կարող ստեղծել այն գումարները, որոնք պահանջվում էին ներդրումների համար: Չնայած կատարված ծավալուն ներդրումների, արեւելյան տնտեսությունն այսօր էլ

դեռևս չի դարձել այնպիսի գործող շուկայական տնտեսություն, որը կարողանա ինքնուրույն աշխատել եւրավականաչափ ներդրումային պաշարներ ներգրավել: Այստեղ տնտեսությունների արդյունավետությունը, շահութաբերությունը շատ ցածր է մնացել: Ըստ վիճակագրության, 1990թ. Արեւելյան Գերմանիայի ձեռնարկությունների միայն 40% էր շահութաբեր, 30% զրոյական արդյունք ուներ եւ եւս 30% աշխատում էր կորուստով: Շատերի կարծիքով արեւելյան հատվածում դեռևս չկան այն պայմանները, որոնցով հնարավոր կլիներ ապակովել ներդրումների հոսքեր ու արդյունավետության աճ: Քանի դեռ ձեռնարկությունները բավականաչափ շահույթ չեն ապահովում ներդրողների համար, այդպիսի տնտեսությունը չի կարելի հաջող գործող համարել: Դժբախտաբար, ութ տարի անց Արեւելյան Գերմանիայում մենք այդ խնդիրը դեռևս չենք հաղթահարել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Որո՞նք են հետպատերազմյան շրջանում Արեւմտյան Գերմանիայում իրականացված սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները:

-Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մենք այդպիսի անցման գործընթաց չունեցանք: Արեւմտյան տնտեսությունը, պատերազմի ընթացքում հարմարվել էր ռազմարդյունաբերական համալիրի պահանջներին, բայց այլ համակարգի անցում չէր կատարել: Պատերազմից հետո յուրաքանչյուր գերմանացի մասնակցեց երկրի վերակառուցմանը: Պատմություններ կան, թե ինչպես բոլորը՝ այդ թվում ծերունիներն ու կանայք, միահամուռ կերպով կամավոր աշխատում էին երկրի վերակառուցման համար: Բոնում՝ Գերմանիայի պատմության թանգարանում, մի հետաքրքիր տեսաժապավեն են տեսել, որտեղ պատմվում է, թե ինչպես էներգետիկ ճգնաժամի պայմաններում Քյոլնի քաղաքացիները իրենք էին փոխարինել մեքենաներին, որպեսզի գազամանցից փղեր տեղափոխեն եւ վերջիններիս օգնությամբ փլատակները մաքրեին: Միանգամայն այլ մտայնություն էր տիրում այդ ժամանակ:

Կային, իհարկե, վարկային ծրագրեր, Մարշալի ծրագիրը: Արեւմտյան Գերմանիայի տնտեսության վերականգնումը սերտորեն կապված էր մեկ այլ դրամական արժույթային ֆենոմենի՝ 1948թ. ներմուծված մարկի հետ, որով առիավետ վերացվեցին այն աղճատումները, որոնք կային գների մեջ, վերացվեց սեւ շուկայի գաղափարը:

-Ի՞նչ փոփոխություններ կկրի Գերմանիայի տնտեսությունը եվրոյի ներմուծմամբ: Արդյոք այն կբերի տնտեսության առավել կայունացման: Եթե այո, ապա հատկապես ո՞ր ճյուղերում:

-Եվրոն կներմուծվի 1999թ. հունվարի մեկից: Մենք հուսով ենք, որ այն կխթանի գերմանական տնտեսությունը, քանի որ այն Եվրամիության ամենախոշոր տնտեսությունն է: Արժույթը միակ խոչընդոտը չէ, որ հառնում է միջազգային առևտրում: Կան այլ խոչընդոտներ եւս, որնց դեռ պատշաճ ուշադրություն չի դարձվել եւ որոնք ավելի ցցուն կդառնան եվրոյի ներդրումից հետո:

Ձեռնարկություններն արդեն իսկ պատրաստվում են միասնական արժույթի ներդրմանը՝ մի շարք ոլորտներում գնալով միաձուլումների:

-Որքանո՞վ է Գերմանիան շահագրգռված արեւմտաեւրոպական կառույցների համախմբմամբ: Պատրաստ է Ձեր երկիրը ֆինանսապես աջակցել Արեւմտյան Եվրոպայի ռազմական միությանը:

-Լինելով Եվրամիության մեջ ամենամեծ երկրը, մենք, իհարկե, բոլոր առումներով շահագրգռված ենք նրա կայունությամբ: Սկսած Եվրահամայնքի ստեղծման օրից, մենք մասնակցել ենք կայունացման ծրագրերում, բայց ավելի քան շահագրգռված էինք այդ գործընթացի դիմադիկային զարկ տալով, միասին զարգանալու, սերտաճելու հարցերով:

Ռազմական հարցերի առնչությամբ նշեմ, որ մենք, իհարկե, ունենք ռազմական արտադրություն, սակայն այն գերմանական տնտեսության ողնայունը չի հանդիսանում: Վերամիավորումից հետո բանակի չափն անգամ նվազեց: Գերմանիայի վերամնավորումը ոչ միայն մեր երկրի համար էր նշանակալի: Դրանով փլուզվեց այն երեւութը, որը կոչվում էր «երկաթե վարագույր»: Որպես դրա հետեւ անք մենք նվազեցրինք մեր ռազմական ուժերը, եւ այդ միտումն այժմ էլ շարունակվում է:

-Որքա՞ն ժամանակ կպահանջվի, որպեսզի Գերմանիայի արեւելյան մասը լիովին ոտքի կանգնի: Ըստ Ձեզ, արդյոք արեւելյան մասը պատրաստ է Եվրոպական միասնական արժուքային համակարգին անդամակցելուն:

-Դեռեւս երկար ժամանակ կպահանջվի արեւելյան հատվածի լրիվ ապաքինման համար: Նվաճումներն, ինչ խոսք, առկա են, բայց դեռ ինչքան ժամանակ կպահանջվի, դժվար է ասել: Սկզբում թվում էր, թե դա կարելի է անել հինգ տարվա ընթացքում, բայց պարզվեց, որ դա պատրանք էր:

Եվրոպական նոր արժույթի առումով որեւէ որակնանմ նոր քայլ չի լինի Արեւելյան Գերմանիայի համար: Շուկայական հարաբերությունները, գները լինեն դրանք մարկով, ֆրանկով, թե եվրոյով, չեն փոխվում: Կան, իհարկե, ծախսեր, որոնք հարկ կլինի անել այդ փոփոխության հետ: Այդ ծախսերի մեծ մասը կընկնի բանկային համակարգի ուսերին: Ֆինանսական համակարգն արդեն իսկ զբաղվում է այդ հարցերով:

-Քազմաթիվ օտարերկրացիներ, այդ թվում եւ հայեր, ներգաղթել են Գերմանիա: Ո՞րն է Գերմանիայի կառավարության քաղաքականությունը ներգաղթի առնչությամբ: Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում ներգաղթը ձեր երկրի տնտեսության վրա:

-Տնտեսության վրա ներգաղթի ունեցած ազդեցությունը սահմանափակ է: Մենք չունենք միգրացիոն միասնական քաղաքականություն: Անշուշտ, կա օրենսդրական դաշտ, որը թույլ է տալիս ծագումով գերմանացիներին վերադառնալ Գերմանիա: Բացի այդ, մենք նաեւ փորձում էինք միջոցներ հատկացնելով կայունացնել բնակչության ներհոսքը, կայունացնել գործընթացը նաեւ ԱՊՀ երկրներում: Իհարկե, այդ մարդիկ ազատ են որոշում ընդունելու:

Եթե խոսքը գնում է քաղաքական հետապնդումների ենթարկվածներին ապաստան տալու մասին, ապա մեր սահմանադրությունն ու օրենսդրական

համակարգը թույլ է տալիս այդպիսի մարդկանց ընդունել: Օրենքով սահմանված գործընթացին հետեւելով, պարզվեց, որ Գերմանիա եկած հայերի միայն շատ քիչ տոկոսն է իսկապես քաղաքական հետապնդումների ենթարկվել հայրենիքում: Նրանց ընդունման աստիճանը կես տոկոսից էլ ցածր է:

- Արդյոք Ձեր կառավարությունը պատրաստ է հարաբերություններ հաստատել հայկական տուրիստական գործակալությունների հետ, ի՞նչ պայմաններով է այն կանխորոշված:

-Սա մի հիմնախնդիր է, որը կապված է նախորդ հարցին: Մենք իհարկե ողջունում ենք զբոսաշրջիկության զարգացումը: Սակայն, քանի որ չենք կարող բավարար կերպով զբաղվել ապաստան փնտրողների հարցով, ուստի մուտքի թույլտվություն ստանալու ամեն մի դիմում առանձին-առանձին դիտարկում ենք:

-Ինչպե՞ս է Գերմանիան պաշտպանում իր ներքին շուկան: Արդյոք գործում են կարգավորիչ ներմուծման հարկեր կամ տուրքեր:

-Եվրոպական միության սահմաններում Գերմանիան ոչ մի պրոտեկցիոնիստական միջոցառումներ ու սահմանափակումներ չունի: Թերեւս զարմանաք, եթե ասեմ, որ Գերմանիան առհասարակ չունի ազգային առեւտրային քաղաքականություն: Եվրամիության բոլոր անդամների համար առեւտրով զբաղվելու լիազորությունը հղվել է Բրյուսել, ուստի գերմանական առեւտրի քաղաքականություն գոյություն չունի:

-Ներկայումս որք՞ան է մեկ շնչին ընկնող եկամուտը Գերմանիայի արեւելյան եւ արեւմտյան մասերում:

-Արեւելյան մասում մեկ շնչին ընկնող եկամուտը կազմում է արեւմտյան նույն ցուցանիշի 65%: Սպառման մակարդակը գրեթե նույն պատկերն ունի՝ 65%:

Այստեղ, սակայն, պետք է հաշվի առնել նաեւ միգրացիոն հոսքերը: Արեւելյան գերմանացիների մի մասը մեկնել է արեւմուտք՝ կյանքի ավելի լավ պայմաններ գտնելու ակնկալիքով: Նախկին արեւելյան բնակչության մի մասը հիմա արեւմուտքում է ապրում եւ ներգաղթվում է արեւմտյան վիճակագրության մեջ:

-Ինչպիսի՞ դեր են խաղացել միջազգային ֆինանսական կազմակերպությունները Արեւելյան Գերմանիայի զարգացման հարցում:

-Ոչ Զամաշխարհային բանկը, ոչ Միջազգային արժուքային հիմնադրամը եւ ոչ էլ մեկ այլ միջազգային կազմակերպություն որեւէ դեր չեն ունեցել Արեւելյան Գերմանիայի տնտեսական բարեփոխումներում: Արեւելյան Գերմանիան դարձավ դաշնային հանրապետության մաս, որն ինքն էլ իրականացնում է ներդրումների հիմնական մասը: Միջազգային ներդրումներ, իհարկե, կատարվել են: Մասնավոր հիմնադրամներ իրենց միջոցները ներդրել են Գերմանիայում: Եվրամիության շրջանակներում եւս ծրագրեր ունենք, որոնք միտված են եվրոպական չափանիշներով կենսամակարդակի համահարթեցմանը: Այլ նվիրատուներ արեւելյան շրջանի զարգացմանը չեն մասնակցում: Ի դեպ, նրանց ոչ մեկը չի էլ խնդրել դա անել, որովհետեւ դա տեղին ու պատշաճ չէր լինի:

-Վերամիավորումից հետո ինչպիսի՞ն էր սոցիալ-հոգեբանական վիճակը երկրի երկու հատվածներում:

-Մի կողմից 60 միլիոն, իսկ մյուս կողմից 16 միլիոն մարդ էր, ուստի դժվար է միջին գնահատականներ տալ: Մինչև դրամական միավորումը դարձյալ միգրացիոն հոսքեր կային. մարդիկ չէին հավատում, որ սահմանի բացումը կայուն քաղաքականություն կշարունակի մնալ: Դեսպանատները լցված էին մարդկանցով, որոնք լքում էին Արևելյան Գերմանիան, ինչը ընդհանուր միտում էր: Նրանք վերադարձան միայն, երբ վերամիավորման հեռանկարի հնարավորություն բացվեց: Սակայն վերամիավորումից հետո էլ արևելքից արտահոսքը չդադարեց՝ մարդիկ անգամ իրենց ունեցվածքն էին թողնում: Բեռլինի պատի քանդելուց հետո տրամադրությունները շուտով պակաս զգացմունքային դարձան: Արևելագերմանացիները մեծ մասամբ տնտեսական տեսանկյունից դեռ բավարարված չեն վերամիավորման արդյունքներով: Արեւմուտքի տեսանկյունով, քաղաքականապես մենք նվաճեցինք մի նոր բարձունք: Եվ քանի դեռ մի մասը բավարարված չէ, ապա մեծ մասը պետք է պատրաստ լինի դժվարությունները իր վրա կրելու թե հոգեպես, թե սոցիալապես:

-Ի՞նչ գործոններ են խանգարում գերմանական բանկերին եւ գործարարներին ներդրումներ կատարել Հայաստանում:

-Ցանկացած ընկերություն կամ բանկ ինքն է որոշումներ ընդունում՝ հիմնվելով զուտ տնտեսական նկատառումների վրա: ՈՒՍՏԻ չկան որեւէ ինստիտուցիոնալ խոչընդոտներ: Ընդհակառակը, մենք ունենք հատուկ մեխանիզմներ, որոնք խթանում են ներդրումները Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի ու ԱՊՀ պետություններում: Մենք մեծապես ներգրավված ենք Ռուսաստանի եւ Ռկրաիմայի տնտեսություններում:

Ըստ իս, այս հարցը պետք է ուղղել Հայաստանի կառավարությանը, որպեսզի այն իր տնային աշխատանքը կատարի ներդրողներ գրավելու համար: Կարծում եմ, որ Հայաստանի ղեկավարները արդեն հասկացել են, որ կապիտալի համար գոյություն ունի զլոբալ շուկա, եւ ցանկացած երկիր, որն ուզում է արտադրական կապիտալ ներգրավել, պետք է մասնակցի այդ մրցակցությանը:

ՀԻՆԳՇԱՐԹԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ



ՀՀ կրթության և գիտության նախարար

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ներկայացնում է

«Բարեփոխումները կրթության բնագավառում»

Հոկտեմբերի 29-ին, ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝